Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Վահան Մարտիրոսյան,

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար,

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Իտալիայի Հանրապետություն, քաղաք Հռոմ, 2017թ. հոկտեմբերի 26-28-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ**

Անաս միջազգային ձեռնարկություն,

Իտալիայի արտաքին գործերի նախարարություն:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Հայաստան. համագործակցության հնարավորությունները ճանապարհաշինության ոլորտում» համաժողովին և վերջինիս շրջանակներում անցկացվող Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի զարգացմանն ու խթանմանը նվիրված աշխատաժողովին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակությունը քաղաք Հռոմում մասնակցել է «Հայաստան. համագործակցության հնարավորությունները ճանապարհաշինության ոլորտում» խորագրով համաժողովին, մասնավոպես՝ վերջինիս շրջանակներում

անցկացվող Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի զարգացմանն ու խթանմանը նվիրված աշխատաժողովին: Այն կազմակերպվել է Անաս միջազգային ձեռնարկության և Իտալիայի արտաքին գործերի նախարարության համատեղ ջանքերով:

Վերոհիշյալ միջոցառմանը մասնակցել են մի շարք իտալական կազմակերպություններ, հաստատություններ և ընկերություններ, որոնք կազմակերպիչների կողմից հրավիրվել էին ծանոթանալու Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրին:

Համաժողովին ելույթներով հանդես են եկել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը, Իտալիայի արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Բենեդետտո Դելլա Վեդովան, Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիկտորյա Բաղդասարյանը, Անաս միջազգային ձեռնարկության նախագահ Ստեֆանո Գրանատին, նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վարդան Կարապետյանը:

Նախարարն իր ելույթում անդրադարձել է Հայաստանում իրականացվող ճանապարհաշինական ծրագրերին, առավել մանրամասն ներկայացրել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի» առանձնահատկությունները, դրա նշանակությունն ու կարևորությունը, ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները:

Նախարարն ընդգծել է այն փաստը, որ հյուսիսը հարավին կապող այս ճանապարհը ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի համար կարևոր նշանակություն ունի, քանի որ այն ավտոմոբիլային միջանցք կհանդիսանա Իրանից մինչև Սև ծով տարանցիկ երթևեկության համար:

Համաժողովի ընթացքում, իտալական ճանապարհաշինական ոլորտում հայտնի կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկվել են նաև «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու կառուցապատման աշխատանքներում իտալական

ճանապարհաշինական ընկերությունների հետ համագործակցության հնարավորությունները:

Աշխատաժողովի շրջանակներում հայկական պատվիրակությունը հետաքրքրված կազմակերպություններին և ձեռնարկություններին ներկայացրել է ծրագրի հիմնական բնութագիրը, ծրագրի իրականացման քաղաքականությունը, ռազմավարական ուղղվածությունը, առանձին տրանշերի ֆինանսավորմանը հավակնող ծրագրերը, նախագծման և շինարարական աշխատանքների վերահսկումը, պետություն-մասնավոր համագործակցության հնարավորությունները:

Իտալական կողմի հետ քննարկվել է նաև Հայաստանում ճանապարհաշինության բնագավառում ներդրումային հնարավորությունների հարցը և պայմանավորվածություն է ձեռք բերվել այդ հարցի շուրջ հետագայում բանակցություններ վարելու վերաբերյալ:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վահան Մարտիրոսյան

30.10.2017թ.